# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /2-րդ/

**«Իշտիկունի Արևային» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Ավազի հանքի փողոց թիվ 4, 5, 6 հողամասեր հասցեներում 3000կՎտ դրվածքային հզորության արևային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

10.01.2025թ.

Լճաշեն բնակավայր

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի Գլխավոր մասնագետ Վարդան Հարությունյանը,
- Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վահան Մարգարյանը,
- Ընկերության բնապահպանական Խորհրդատու Զառա Զուռնաչյանը:
- «Իշտիկունի Արևային» ՍՊԸ-ի տնօրեն Հրանտ Գնունին և համայնքի բնակիչներ:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2025թ. հունվարի 10-ին ժամը 12:00-ին Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Իշտիկունի Արևային» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Ավազի հանքի փողոց թիվ 4, 5, 6 հողամասեր հասցեներում 3000կՎտ դրվածքային հզորության արևային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:
- Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վարդան Հարությունյանը, ով հանդես եկավ բացման խոսքով ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:
- Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության

վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության Որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ:

Այնուհետև Փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Վարդան Հարությունյանի կողմից հնչեց հարց օդային գծի երկարության պարզաբանման վերաբերյալ, ինչին ընկերությունը հստակեցրեց:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ, որոնց հիմնականում հետաքրքրում էր թե արդյոք կլինեն աշխատատեղեր, որտեղ կկարողանան ներգրավել մասնագետ գյուղացիներին, ինչին ընկերության տնօրեն Հրանտ Գնունին պատասխանեց որ տվյալները կվերցնեն և համապատասխան աշխատանք լինելու դեպքում կներգրավեն:

Արձանագրությանը կցված է հանրային լսումների մասնակիցների ցանկը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան

«Իշտիկունի Արևային» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հրանտ Գնունի